Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2.1
«ՄԱԿԿ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26.11.2019թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)
Կոմիտեի լիցենզավորման բաժնի պետ Աշոտ Վարդանյան:

Անդամներ՝

Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)
Կոմիտեի լիցենզավորման բաժնի աշխատակից Լևոն Պողոսյան
Կոմիտեի ճառագայթային անվտանգության և պաշտպանության բաժնի աշխատակից՝ Գագիկ Բալասանյան
Գնման Պատասխանատու/Բացող Աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)
Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ Ֆենյա Նավասարդյան
Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպիչ՝ Աննա Միքայելյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու/Մրցույթի Համակարգող(ԳՊ/ՄՀմ)
Կոմիտեի ֆինանսահաշվապահական բաժնի գլխավոր տնտեսագետ՝ Ս.Շիրինյան:

1. «ՄԱԿԿ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման էլեկտրոնային ձևով գնման ընթացակարգի հայտերի բացման վայրը, օրը և ժամը

1.1 «ՄԱԿԿ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով ներքին աուդիտի ծառայության գնման գնանշման հարցման «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա իրականացված գնման ընթացակարգի բացումը տեղի է ունեցել 2019թ. նոյեմբերի 25-ին ժամը 11:00, armeps.am համակարգի միջոցով:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և էլեկտրոնային հասցեները

Հ/Հ	Մասնակցի անվանումը	ՀՎՀՀ	Կապի միջոց
1	«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ	01529594	office@anaudit.am
2	ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս ՍՊԸ	00419022	auditservicellc@gmail.com
3	ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ	02618043	Asatryan.albert@yahoo.com

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ՄԱԿԿ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով «ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն և «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն ներկայացրել են հրավերով սահմանված պահանջվող փաստաթղթերը, իսկ «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն համակարգի միջոցով ներկայացրել է միայն գնային առաջարկը, հայտում բացակայում է դիմում հայտարարությունը՝ հրավերի հավելված 1-ը, որի պատճառով նիստը կասեցվել է 1 աշխատանքային օրով, կազմակերպությանը հնարավորություն է տրվել վերացնել անհամապատասխանությունը: «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում վերացրել է անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Տվյալներ՝ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

«ՄԱԿԿ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով սահմանված պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված պահանջներին համապատասխան,

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն համակարգի միջոցով ներկայացրել էր միայն գնային առաջարկը հայտում բացակայում էր դիմում հայտարարությունը: Ներկայացված գնային առաջարկը համապատասխանում էր հրավերով սահմանված պահանջներին: «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում ճշտել է անհամապատասխանությունները, որի արդյունքում կազմակերպության ներկայացրած փաստաթղթերը գնահատվում են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան,

«ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով սահմանված պահանջվող փաստաթղթերը, սակայն գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների կողմից առաջարկած գները.

Չ/Բ	Չափաբաժնի անվանումը	Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/	
				Գինը՝ առ.ԱԱՀ	Գինը՝ ներառ. ԱԱՀ
1	Ներքին աուդիտի ծառայություն	«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա	6 300 000	7 560 000
		ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ		4 400 000	5 280 000

Գնահատող հանձնաժողովը որոշեց

Հրավիրված նիստում հայտ ներկայացրած մասնակիցներից ոչ ոք ներկա չի գտնվել նիստին, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառ. 2017 թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ կետը, կասեցնել նիստը և բավարար գնահատված մասնակիցներին՝ «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ և ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ-ին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել, հրավիրելով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Բանակցությունները տեղի կունենան 2019 թվականի նոյեմբերի 29-ին ժամը 10:00-ին ք.Երևան Տիգրան Մեծի 4 հասցեում 5-րդ հարկ: Բանակցությունների վերջնաժամկետն է 2019 թվականի նոյեմբերի 29-ի ժամը 12:00-ն:

Հաջորդ նիստը անցկացնել 2019 թվականի նոյեմբերի 29-ի ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Վարդանյան .....

Հանձնաժողովի անդամներ՝ **Լ.Պողոսյան** .....

Գ.Բալասանյան .....

Ֆ.Նավասարդյան .....

Ա.Միքայելյան .....

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ս.Շիրինյան** .....